ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Շիրակի մարզ, Անի համայնք, քաղաք Մարալիկ, Քաղաքային հրապարակ 1, Հեռ. (0242)2-24-00, (0242)2-22-37, (044)04-50-50,

«13» նոյեմբերի 2023 թ.
N 1733

«ՖԻՈՐԻ ԳՐՈՒՊ ԱՄ» ՍՊԸ-Ի

ՏՆՕՐԵՆ ԳՈՌ ԴԱՆԻԵԼՅԱՆԻՆ

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրն ամբողջությամբ միակողմանի լուծելու մասին

ՀՀ Շիրակի մարզ Անի համայնքապետարանի (այսուհետ՝ Գնորդ) և «ՖԻՈՐԻ ԳՐՈՒՊ ԱՄ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 2023թ.-ի հուլիսի 14-ին կնքված ՇՄԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-23/2-1 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր), ինչպես նաև 2023 թվականի հուլիսի 20-ին կնքված ՇՄԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-23/2-1 ծածկագրով գնման պայմանագրի անբաժանելի մաս համարվող թիվ 1 արձանագրության, շրջանակներում Վաճառողը ստանձնել է պարտավորություն մատակարարել Պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված ապրանքը, սակայն Վաճառողը Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչ օրս մատակարարում չի կատարել:

2023թ.-ի նոյեմբերի 03-ին Գնորդը գրությամբ դիմել է Վաճառողին, որպեսզի երեք աշխատանքային օրվա ընթացքում մատակարարվի թիվ 1 հավելվածով սահմանված ապրանքը, սակայն Վաճառողից ոչ մի արձագանք չի ստացվել:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու հիմքով ՀՀ Շիրակի մարզ Անի համայնքապետարանը հարկադրված է 2023թ.-ի նոյեմբերի 13-ից Պայմանագիրն ամբողջությամբ միակողմանի լուծել: Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման մասին կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Միաժամանակ հայտնում ենք, որ Վաճառողին տրվում է 10 աշխատանքային օր՝ որակավորման և պայմանագրի ապահովումները՝ համապատասխանաբար 6900000 (վեց միլիոն ինը հարյուր հազար) ՀՀ դրամի և 4600000 (չորս միլիոն վեց հարյուր հազար) ՀՀ դրամի չափով, վճարելու համար: Փոխանցումը անհրաժեշտ է կատարել Գնորդի բանկային հաշվին **(ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն, Հ/Հ 900495101090)**:

Սահմանված ժամկետում փոխանցումը չկատարելու դեպքում պարտավորվում ենք որոշում կայացնել <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6/ա-րդ կետի համաձայն «ՖԻՈՐԻ ԳՐՈՒՊ ԱՄ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

Հարգանքով՝

Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ